մակարգով և լաբորատորիայով: «ԱՐՄ ՄԻԹ» ՍՊԸ-ի ողջ տեսականին հավատարիմ է պետստանդարտի սահմանած և հաստատած անհրաժեշտ տեխնիկական պայմաններին: Այստեղ կիրառվում են նորագույն տեխնոլոգիաներ և ժամանակակից սարքավորումներ: Արտադրության գործընթացում ընդգրկված են ոլորտի լավագույն մասնագետները:

«ԱՐՄ ՄԻԹ» ընկերությունը սպառողին ներկայանում է լայն և բազմազան տեսականիով՝ եփած երշիկներ, նրբերշիկներ, սարդելկաներ, կիսաապխտած երշիկներ, կիսապատրաստվածքներ, ավանդական շարք, դելիկատեսներ, հում ապխտած երշիկներ:

ԲԱԲԻԿ 90 ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ DG Meat Food ապրանքանիշ

«Բաբիկ» մսամթերքի արտադրությունը հիմնադրվել է 1998 թվականին: Այս ընկերությունը շուկայում ներկայանում է DG Meat Food ապրանքանիշով:

Այսօր ձեռնարկությունում արտադրվում է մոտ 70 տեսակի մսամթերք, որը վաճառվում է ոչ միայն տեղական շուկայում, այլև արտահանվում է: Մսամթերքի տեսականին ներառում է վետչինա, սարդելկա, նրբերշիկ, սուջուիս, բաստուրմա, ապխտած, եփած, կիսաապխտած, հում ապխտած երշիկների տեսականի, ապխտած մսի տեսականի՝ ֆիլե, բուժենինա, բեկոն, խոզի կողեր, կիսապատրաստվածքներ՝ քյաբաբի ֆարշ, սառեցրած քյուֆթա, սառեցրած քյաբաբ, աղացած միս, ապխտած հավ, ջերքի:

Արտադրությունն իրականացվում է գերմանական և շվեյցարական ժամանակակից սարքավորումներով, արտադրական գործընթացում մարդու միջամտությունը հասցված է նվա-

զագույնի: Արտադրանքի որակի վերահսկողությունն իրականացվում է միջազգային ստանդարտներին համապատասխան: Ապացույցը բարձր պարզանքներն ու ոսկե մեդալներն են:



ԼՈՒՄԱ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Լումա» ընկերության գլխավոր նպատակը մեկն է՝ բնակչությանն ապահովել որակյալ արտադրանքով:

Արտադրական ծավալները փոքր են, սակայն սա խոչընդոտ չէ որակյալ և համեղ արտադրանք թողարկելու համար: Ընկերության գործարանում արտադրվում են հում, ապխտած, եփած երշիկների տեսականի, նրբերշիկ, սարդելկա, բաստուրմա, սուջուկ և այլն:

«Լումա» ապրանքանիշով տեսականին մակնշմամբ բավարարում է օրենքով ներկայացվող պահանջները:



«50 լավագույն արտադրողներ» ծրագրի շրջանակում իրականացվող ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակվում է իրացվել ոչ բավարար որակի մսամթերք, որը չի համապատասխանում նորմատիվ պահանջներին: Օրինակ՝ «Շիրվանյան և ընկերներ», «Գայանե-Ջամե» և այլ ընկերություններում ոչ պարզաճ սանիտարական վիճակ է, անձնակազմի բուժզննում չի կատարվում, իրենց հիմնականում ոչ բարձր որակի արտադրանքն իրացնում են հեռավոր մարզերում՝ օգտվելով սպառողների սակավ իրազեկվածությունից:

ՊԱՂՊԱՂԱԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերջին շրջանում պաղպաղակ արտադրողները շատ հաճախ են օգտագործում ոչ բնական գունանյութեր, բուսական յուղեր, համ ու հոտ տվող սինթետիկ բաղադրիչներ, սակայն նշենք, որ բարեբախտաբար դեռևս կան բարեխիղճ արտադրողներ, որոնք են.

- Գրանդ Քենդին,
- Աշտարակ-Կաթ ապրանքանիշը,
- Pink Berry-ն:

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Գրանդ Քենդի» ընկերության պաղպաղակները՝ սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական համերով, արտադրվում են թե՛ քաշային, թե՛ հատային տարբերակներով: Տեսականին ներառում է ջնարակապատ էսկիմոներ, բրիկետներ, պոլիէթիլենային տոպրակներով, պլաստիկ տարաներով, նաև վաֆլե բաժակով պաղպաղակներ: Ի դեպ, վաֆլե բաժակներն արտադրվում են ընկերության գործարանում: Շուկայում նորույթ է բնական վանիլի քերուկով պաղպաղակը:



ԱՇՏԱՐԱԿ-ԿԱԹ ԱՊՐԱՆՔԱՆԻՇ



«Աշտարակ-Կաթ» ապրանքանիշով պաղպաղակներն աչքի են ընկնում համերի բազմազանությամբ: Վաճառակետերում կարելի է գնել վանիլային, շոկոլադե, դեղձի, ելակի, բալի, բանանի, կիվիի, ծիրանի, սուրճի, կապուչինոյի, ձմերուկի, խտացրած կաթի համերով, գետնանուշով ու ջնարակապատ պաղպաղակներ:

ՓԻՆՔ ԲԵՐՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

«Փինք Բերրի» ընկերությունը հիմնադրվել է 2013-ին: Այս տարիների ընթացքում նրան հաջողվել է դառնալ պաղպաղակի շուկայի առաջատարներից մեկը Հայաստանում: Արտադրության մեջ ներգրավված բարձր որակավորում ունեցող մասնագետներն ապահովում են պաղպաղակի կատարյալ համը: Բնական, անարատ հումք, բարձրակարգ տեխնոլոգիաներ, իտալական ժամանակակից սարքավորումներ և յուրահատուկ փաթեթավորում, արդյունքում՝ միջազգային ստանդարտներին համապատասխան արտադրանք:

«Փինք Բերրի» առաքելությունն է պարզել քաղցրություն, դրական էմոցիաներ ու ժպիտներ: «Փինք Բերրի» ընկերությունը մշտապես մեր ազգի կողքին է և ուժերի ներածին չափով փորձում է զարգացնել երկրի տնտեսությունը:

Ընկերությունն առաջարկում է շուրջ 25 տե-



սակ բացառապես բարձր հումքով հատով պաղպաղակներ, որոնք պարբերաբար համալրվում են նոր տեսակներով: Հիմնադրման օրվանից «Փինք Բերրին» մշտապես ավելացնում է վաճառակետերը՝ առավել հասանելի դարձնելով իր համեղ տեսականին:

«Փինք Բերրի»: Վայելիր ice պահը...

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այսօր գրեթե հնարավոր չէ պատկերացնել մեր կյանքն առանց ոգելից խմիչքների, որոնք բացի հաճույք պատճառելուց, նաև բուժական նշանակություն ունեն և անփոխարինելի են ժողովրդական բժշկության մեջ: Ինչ խոսք, ինչպես ցանկացած արտադրանքի դեպքում, շատ կարևոր է որակյալ արտադրատեսականու ընտրությունը հատկապես Ամանորի նախաշեմին, երբ շուկան ողողվում է հայտնի ու անհայտ ապրանքանիշերով խմիչքներով: Նախքան տոնական գնումներ կատարելը հարկավոր է միայն հիշել, որ բարձրակարգ ընկերությունների արտադրանքը շաղցվում է հատուկ շշերի մեջ, անպայման առկա են ակցիզային դրոշմանիշ և լիարժեք մականշում: Մասնագետները հորդորում են հրաժարվել անհայտ ծագման, տնային պայմաններում պատրաստված օղի գնելուց, առավել ևս որ հայրենական շուկան հարուստ է բարձրորակ խմիչքների տեսականիով: Այս եռամսյակ էլ ոլորտի լավագույն տասնյակում շարունակում են կայուն տեղ զբաղեցնել «Շամպայն գինիների գործարանը» և «Պռոշյանի կոնյակի գործարանը»:



ԵՐԵՎԱՆԻ ՇԱՄՊԱՅՆ ԳԻՆԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Ճանաչայն արքաների գինի է և գինիների արքան:

Փոխվում են ժամանակներն ու բարքերը, բայց նույնն են մնում փոնի սպասումն ու սպասելիքները: Որքան էլ փոփոխվեն փոնական զարդարանքն ու փրամադրությունը, անփոփոխ ու հասարարուն են մնում լուսազարդ եղանին ու փոնական շամպայնը:

Երևանի շամպայն գինիների գործարանը հիմնադրվել է 1939 թ.: Այն ունի միջազգային չափանիշներին համապատասխան արտադրության տեխնոլոգիա, որակի հսկման լաբորատորիա, սանիտարահիգիենիկ պահանջները բավարարող արտադրամասեր և բարձրակարգ մասնագետներ:

Արտադրանքն ամբողջովին սերտիֆիկացված է: Երևանի շամպայն գինիների գործարանն Անդրկովկասում միակն է, որտեղ արտադրվում է ֆրանսիական դասական մեթոդով կոլեկցիոն շամպայն, որը ստացվում և հնացվում է շերտում նվազագույնը երեք տարի:

Տեսականին

Այսօր գործարանում արտադրվում են.

- շամպայն (Հայկական շամպայն չոր, Հայկական շամպայն կիսաչոր, Հայկական շամպայն կիսաքաղցր, Հայկական շամպայն կոլեկցիոն Բրյուտ, Հայկական շամպայն Կոլեկցիոն կիսաչոր),
- խաղողի գինիներ (Ֆրանս, Վայք Արենի, Նվարդ, Հարսանեկան, Հողի արյուն, Հայկ Նահապետ (Կարմիր կիսաքաղցր և Սպիտակ կիսաչոր), Վերաճնունդ, Սպիտակ քիշմիշ կիսաքաղցր, Սև քիշմիշ կիսաքաղցր), «Նուբարե» սպիտակ անապակ գինի,
- մրգապտղային սեղանի կիսաքաղցր գինիներ (Նռան գինի, Մոշի գինի, Բալի գինի, Ազնվամորու գինի, Ելակի գինի, Սև հաղարջ),
- կոնյակներ օրդինար և տեսակավոր (Ֆրանս 3, 5, 7, 10, 15 տարիների հնության, Մենուա 3 տարեկան, Տրդատ 5 տարեկան, Гордость Армении 3, 5, 7, 10 տարիների հնացմամբ, Նարե 6, 10, 15 տարիների հնացմամբ):



Օգտակարությունը

Բոլոր շողշողուն գինիների նման շամպայնը պարունակում է մեծ քանակով պոլիֆենոլներ (սրանք հակաօքսիդանտներ են, որոնց կանոնավոր օգտագործման դեպքում հնարավոր է խուսափել քաղցկեղածին, սիրտ-անոթային և նեյրոդեգեներատիվ հիվանդություններից, օստեոպորոզից), որոնք լայնացնում են արյունատար անոթները՝ բարելավելով սրտի և ուղեղի արյան մատակարարումը:

Շամպայնով լոգանքը միայն շքեղություն չէ, քանի որ դրանից վերականգնվում են մաշկի բջիջները, նորանում՝ հյուսվածքները, պահպանվում՝ ջրային հավասարակշռությունը, արագանում՝ կոլագենի արտադրությունը:

Ապացուցված է, որ.

- շամպայնն ազատում է լարվածությունից, վերականգնում ախորժակը, լավացնում հիշողությունը, թարմացնում մաշկը,
- բաղադրության մեջ եղած հակաօքսիդանտները կանխում են ազատ ռադիկալների գործունեությունը՝ նվազեցնելով վնասակար նյութերի ազդեցությունն օրգանիզմի վրա,
- շամպայնը գլխուղեղն ու սրտամկանը հարստացնում է թթվածնով, ամրացնում արյունատար անոթների պատերը:

Սպառողների ազգային ասոցիացիայի և Սպառողների միջազգային կազմակերպության 20-ամյա գործակցության առթիվ «Շամպայնագործության մեջ որակի և նրբահամության ՀՀ պարզիրակ ամբողջ աշխարհում» անվանակարգում «Սպառողի գնահատական» մրցանակ է շնորհվել «Երևանի Շամպայն գինիների գործարան» ԲԲԸ-ին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՈՒՆԴ



Հայտնի է, որ զարգացած երկրներում բնակչության, մասնավորապես՝ երիտասարդության, 60-70 տոկոսն օգտվում է հանրային սննդի կետերից: Ցավոք, այս միտումն արդեն նկատելի է նաև մեր երկրում:

Հանրային սննդի ծառայություններից օգտվում են հանդիսությունների սրահները (90 տոկոս), սգո սրահները (70 տոկոս), ուսանողությունը (80 տոկոս):

Նշված դաշտը կարգավորվում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Համապատասխանության հավաստման մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև նորմատիվ մի շարք փաստաթղթերով (ՀՍ 189-2000): Ցավոք, շատ կազմակերպություններ անտեսում են այս պահանջները: «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի Հոդված 12-ի Կետ 6-ը պահանջում է հանրային սննդի աշխատակիցներից (հրուշակագործ, մատուցող, խոհարար, բարմեն, բուֆետապան, սրահի վարիչ) պարտադիր ունենալ մասնագիտական կրթություն և լինել վերաորակավորված:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ ոչ բոլոր աշխատակիցներն են ժամանակին անցնում բուժզննում, ոչ բոլորն ունեն մասնագիտական որակավորում, ձեռք բերված ոչ բոլոր մթերքներն ունեն համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր, ոչ բոլոր օբյեկտներն են ապահովված անհրաժեշտ առևտրատեխնոլոգիական սարքավորումներով:

Հիշյալ թերություններով են աշխատում ԱԶ Աշոտ Ղուկասյան «Հացատուն» խորտկարանը, «Մարաշի հրաշք», «Տի Էմ Էս բուրգեր» ընկերությունները, Մալաթիա տոնավաճառի դիմաց գործող FAMILY FAST FOOD խորտկարանը, ԱԶ Գոհար Թորոյան «Խորտկարանը», Բաշ Ապարան ընկերության «Ապարան» բուֆետը, «Բալենի Ա. Կ.» խոհարարական խանութը, «Եղնիկ», «Նոր թոնրատուն» և «Հացատուն» խորտկարանները:

Մոնիթորինգային աշխատանքները շարունակվում են: Դրանց կարող են մասնակցել նաև սպառողները՝ կապ հաստատելով 098 (099) 24 92 04 հեռախոսահամարով:

ԹՈՉՆԱՄՍԻ ԵՎ ԶԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Փաստենք, որ շուկայում իրացման ծավալների պակաս չի գագավում, սակայն նշենք, որ այսօր էլ իրացվում է թերմակնշված ապրանք, հաճախ կեղծվում է պահպանման ժամկետը: Աստիճանաբար ավելանում են տեղական որակյալ թոչնամսի ծավալները, սակայն դեռևս կան հարցեր, որոնք պարզաբանման կարիք ունեն: Խոսքը մասնավորապես թոչնակների բաղադրության մասին է (կայունացուցիչներ, հակաբիոտիկներ, հորմոններ, վիտամիններ, եթե, իհարկե, օգտագործվել են): Սպառողների ազգային ասոցիացիայի հասցեով ստացվում են բազմաթիվ դիմում-բողոքներ այն մասին, որ փաթեթավորմամբ վաճառվող խմբաքանակներում շատ են կոտրված կամ վնասված կեղևով ձվերը, նաև պահպանված չէ տեսակավորումը: Վերջին շրջանում գրանցվել են նաև թունավորումներ թոչնամսից: Ոլորտում առկա այս և այլ խնդիրներն

առավել մանրամասն կներկայացվեն հաջորդ համարներում:



ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Գաղտնիք չէ, որ ՀՀ-ում կաղում են սպասարկման ու վաճառքի մի շարք ոլորտներ՝ էլեկտրատեխնիկա, բջջային հեռախոսներ, ավտոպահեստամասեր, հանրային սնունդ, կերամիկական սանտեխնիկա, հեռահաղորդակցություն, առցանց առևտուր, կարմիր գծեր, արագաչափեր, կոսմետիկական արտադրանք և այլն: Ցավոք, հաճախ մատուցվող ծառայության որակը չի համապատասխանում օրօրի բարձրացող գներին:

Մասնավորապես ավտոպահեստամասերի ոլորտում հաճախացել են դեպքեր, երբ բրենդային ապրանքի փոխարեն իրացվում է նույնանուն անորակ կրկնօրինակը: Սպառողները դիմում են մեզ, սակայն ՍԱԱ-ն իրավասու չէ նման հարցեր կարգավորել:

ՎԵՐԴԵ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԴԵ մաքրման սրահում մշտապես կարևորվում է ժամանակակից տեխնոլոգիաների դերը: ՎԵՐԴԵ-ն համագործակցում է իտալական ու գերմանական FIRBIMATIC, Miele, PONY, Seitz, Kreussler և BUFA ընկերությունների հետ:

Ընկերությունում կարևորվում է շրջակա միջավայրի և մաքրության պահպանումը, ինչի ապացույցը կիրառվող Green Earth մաքրման տեխնոլոգիան է, որի ժամանակ օգտագործվում են շրջակա միջավայրը չաղտոտող անվնաս նյութեր:

Լավագույն փորձագետները մանրամասն գնում են հագուստն ու ընտրում դրա մաքրման ամենաարդյունավետ տարբերակը՝ կիրառվող տեխնոլոգիաների ու շահագործվող սարքավորումների շնորհիվ հասնելով անթերի արդյունքի:

ՎԵՐԴԵ ընկերության ծառայությունները ներառում են վարագույրների մաքրում, արդուկում, հարսանյաց և երեկոյան զգեստների, նաև գորգերի մաքրում: Եթե գորգը շատ հին է և հատուկ արժեք ունի, ապա սրահի փորձագետներն այն մաքրում են Green Earth տեխնոլոգիայով, ինչի արդյունքում գորգը չի վնասվում և լիովին պահպանում է իր գույնն ու որակը:

Սրահն իրականացնում է նաև թավշյա, կաշվե ու մորթե իրերի (վերարկուներ, բաճկոններ, կոստյումներ, ժիլետներ, տաբատներ, ձեռնոցներ և



այլն) մաքրում, կաշվե հագուստի և իրերի ներկում:

ՎԵՐԴԵ սրահը մաքրման ծառայություններ է մատուցում ոչ միայն անհատներին, այլև կազմակերպություններին, մասնավորապես՝ հյուրանոցներին, ռեստորաններին կամ հարսանյաց սրահներին:

ՎԵՐԴԵ սրահն իրականացնում է նաև առաքում: Հագուստը պատվիրատուի նախընտրությամբ փաթեթավորվում է ծալած կամ հատուկ կախիչներով:

www.verde.am կայքում ներկայացված են բոլոր ծառայությունների գնացուցակը և մանրամասն նկարագրումը:

ԷԼԲԱՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայ-գերմանական «Էլբատ» ընկերությունն արտադրում է եվրոպական ստանդարտներին համապատասխան, բնության համար անվտանգ, որակյալ մարտկոցներ, որոնց համար տրվում է մինչև մեկ տարվա երաշխիք, նաև անվճար հետերաշխիքային սպասարկում: Ընկերությունը, հիմնվելով սեփական փորձի և շուկայի պահանջարկը ճիշտ գնահատելու կարողության վրա, ընդլայնել է իր արտադրանքը՝ առաջարկելով գերիզոց և անխափան էլեկտրական սնուցման ծառայություն, հուսալի համակարգ: Ընկերությունում տեղադրվում են առցանց UPS DC/AC կայաններ, այն է՝ ռեզերվային սնուցման արտաքին համակարգ, կատարվում մարտկոցների փոխարինում UPS մարտկոցի պահեստամասերի համար:

Գործում է նաև ընկերության առցանց խանութը: Անհրաժեշտ է այցելել ընկերության կայքէջ (www.elbat.am), առցանց խանութ բաժինը, ընտ-



րել մեքենային համապատասխան մարտկոց, լրացնել անհրաժեշտ տեղեկատվությունը և սպասել մասնագետների արձագանքին:



ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳ

Ամանորի և Սուրբ Ծննդյան վաճառքի ավանդույթը մեզանում նորությունն է: Հենց այս ժամանակահատվածում սպառողները հաճախ մոռանում են դրամապանակի իրական հնարավորությունների մասին և նույնիսկ ֆինանսական դժվարությունների դեպքում դժվար են դիմակայում տոնական շռայլությանը: Ավելին, մարքեթոլոգները հիասալի գիտեն, թե ինչպես կարելի է խախտել ամանորյա գնումների համար սպառողի սահմանած ֆինանսական և ժամկետային շրջանակը: Գաղտնիքը հետևյալն է՝ զեղչեր, բոնուսներ, գումագեղ ցուցափեղկեր...



Ամանորյա վաճառքի ռազմավարություն

Մասնագետները վստահեցնում են, որ դեկտեմբերն ամենալավ ամիսն է առևտրի ու շահույթ ստանալու տեսանկյունից: Հոգեբաններն էլ իրենց հերթին պնդում են, որ տոնական տրամադրությունն ու եռուզեռը սպառողին դարձնում են ամեն ինչ ցանկացող երեխա, որին բնավ չեն անհանգստացնում պահանջարկի ավելացման պատճառով գլուխ բարձրացրած թանկացումները:

Խորհուրդ տալ, թե հատկապես ինչն է ձեռնտու գնել Ամանորին, և ինչը՝ ոչ, անշտորհակալ գործ է: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է անհատական մոտեցում: Միևնույն ժամանակ մանրածախ առևտրով զբաղվողները գիտեն, որ համացանցային գիտելիքներով զինված ժամանակակից սպառողը խորհուրդների կարիք չունի:

Ուրեմն ինչ անել, որպեսզի Ամանորն ընտանեկան բյուջեի համար կործանարար չլինի:

1. Առավել արդյունավետ է Ամանորի բյուջեն նախապես պլանավորել և տոնական գնումների ծանր գործը չթողնել տարվա վերջին օրերին:

2. Ճիշտ է գնումների գնալ նախապես կազմած ցուցակով և գումար վերցնել այնքան, որքան անհրաժեշտ է պլանավորածը գնելու համար:

Վաղուց նորություն չէ, որ հատկապես Ամանորին է գրանցվում ոգելից խմիչքի, շոկոլադի, մսամթերքի գնի և վաճառքի թռիչքաձև աճ:

Սա, ինչ խոսք, ենթադրում է լրջագույն նախապատրաստական աշխատանքներ՝ կապված տեսականու մեծացման, տոնական զարդարանքի, նաև անձնակազմի վերապատրաստման համար:

Սկսենք խանութի արտաքին ձևավորումից, որը բնականաբար սկսվում է ցուցափեղկից: Այն պիտի լինի գրավիչ ու կանչող:

Հաճախ կարելի է տեսնել, որ, որպես գովազդային հարթակ, օգտագործվում են նաև խանութների հարակից տարածքները, որտեղ հնարավորություն կա տեղադրելու շոկոլոն տոնածառ ու գրավիչ Ձմեռ պապ: Միշտ պետք է մտածել, թե ինչպես կարելի է տարբերվել մրցակիցներից, այլ խոսքով ասած, լինել անսովոր ու մի քիչ հանելուկային: Հիշենք, որ տոնական տրամադրությունը երբեք շատ չի լինում: Իսկ դա կարելի է ստանալ սրահի ձևավորմամբ՝ փաթիլներ, եղևնու ճյուղեր, խաղալիքներ ու լույսեր, տոնական պաստառներ, նաև սրահի աշխատակիցների հագուստի տոնական դետալներ, նախապես փաթեթավորած նվեր-տուփեր: Յուրատեսակ տոնական տրամադրություն կարելի է ստանալ նաև վաճառվող տեսականու պիտակների տոնական ձևավորմամբ:

Խորհուրդ է տրվում տոնական տեսականին տեղակայել դրամարկղի կամ մուտքի հատվածում, որտեղ գնորդների կուտակումներն ամենաշատն են:

Մշտապես և հատկապես տոնական օրերին խրախուսելի են վաճառվող ապրանքներից կազմված հավաքածուները, ինչպես խմիչքն ու քաղցրավենիքը, թեյի տեսականին ու թեյնիկները:

Տոնական ակցիաներ

Տոների նախաշեմին կտրուկ աճում է մրցակիցների ակտիվությունը, հետևաբար մտածել ակցիաների կարևորության մասին նույնիսկ չարժի: Դա, կարելի է ասել, պարտադիր է:

Ակցիաները, որպես վաճառքի խթանման միջոց, իրենց զինանոցում ամենից հաճախ օգտագործում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են զեղչերը, նվերները, այդ թվում՝ նվեր քարտերը, և լրացուցիչ ծառայությունները, որոնք կարող են ընդգրկել:

- գնված ապրանքների անվճար փաթեթավորումը, ինչը ոչ միայն դրական հույզեր կարող է առաջացնել, այլև կխթանի վաճառքը,

- ապրանքների անվճար առաքումը, հատկապես եթե վաճառվում են մեծ և ծանր ապրանքներ,

- լրացուցիչ անակնկալ նվերները:

Անձնակազմի վերապատրաստում

Անձնակազմին «տոնական բուֆին» պատրաստելն ամենակարևոր դետալներից է: Հենց այս օրերին մեծանում է խորհրդատվության, հուշումների և այլ օգնության կարևորությունը:

Խանութների օպտիմիզացում

Նախ հարկավոր է մտածել խանութների աշխատաժամերի մասին (եթե դրանք սահմանափակ են): Նախատոնական օրերին հաճախորդների հոսքը բաշխելու և հնարավորինս մեծ շերտեր ու խմբեր գրավելու համար խելամիտ է փոխել և բացման, և փակելու ժամերը՝ հնարավորություն ստեղծելու համար գնումներ կատարել և աշխատանքի գնալուց առաջ, և տուն դառնալիս:

Կարևոր է նաև խանութը տեխնիկապես պատրաստել, որպեսզի այն կարողանա դիմակայել հաճախորդների մեծ հոսքին:



ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Փորձված մեթոդ է, երբ գովազդից հետո գնորդը վախենում է բաց թողնել շահավետ կամ հետաքրքիր գնումը: Գաղտնիքը գովազդում հնչող «կախարդական» բառերն են այն մասին, որ քանակը կամ վաճառքի ժամկետը սահմանափակ է:

2. Ինչպես ամբողջ տարի, տոնական օրերին ևս արդյունավետորեն գործում է մեծ վաճառասարահների մարքեթինգային խայծը: Խոսքը մասնավորապես դրամարկդի տեղակայման մասին է, երբ դրամարկդին մոտենալու համար սպառողը ստիպված է լինում անցնել պայծառ լուսավորված, գեղեցիկ և հարմարավետ դասավորված դարակների կողքով և կատարել չնախատեսված գնումներ:

Միրելի սպառողներ, ինչ խոսք, այս ամենն արվում է բոլորիս փոքր առավել գունեղ դարձնելու համար, սակայն չմոռանանք, որ ցանկացած զեղչի կամ ակցիայի թիկունքում մեծ ու փոքր շահույթ է թաքնված: Սա նշանակում է, որ ամենևին էլ պարտադիր չէ գնումներ կատարել միայն այն պարճառով, որ գործում են զեղչեր:

Տոնական իրադրանքման ժամանակ ևս ուշադիր լինենք հարկապես սննդամթերքի որակին ու մակնշմանը: Չմոռանանք, որ անգամ նոր տարվա առաջին օրերին գործում են վաճառասարահներ, ինչը հնարավորություն է տալիս մշտապես ունենալ թարմ ապրանքներ, հետևաբար խուսափել մի շարք ստողծական խնդիրների պարճառ հանդիսացող այն մթերքներից, որոնք օրվա մեջ մի քանի անգամ հայտնվում են և՛ սենյակային, և՛ սառնարանային ջերմաստիճանում:

ԱՌՋԵՎՈՒՄ ՍԵՎՋՐԱՅԻՆ ՆԱԴԱՍՏԱԿԻ ՏԱՐԻՆ Է

2023 թվականը խորհրդանշում են երկու տարբեր կենդանիներ՝ ճագարն ու Նապաստակը, որոնք որոշ առումներով նման են՝ փափկամազ են, ճանկոռող ու վտանգավոր թաթիկներով: Սակայն երկուսն էլ ընկնելիս կարողանում են անվնաս մնալ: Եվ այսպես, 2023-ի տիրակալը Սև ջրային Նապաստակն է, որի իշխանությունը կձգվի 2023-ի հունվարի 22-ից մինչև 2024-ի փետրվարի 9-ը: Ի դեպ, Նապաստակը սև ու ջրային լինում է 60 տարին մեկ:

2023-ը բնորոշվում է որպես մեծ ձեռնարկումների տարի: Կենդանակերպի շատ նշանների համար այս շրջանը բարենպաստ է ընտանիք ստեղծելու և երեխաներ ունենալու համար: Աստղագուշակները հույս են տալիս, որ 2023-ը կլինի նույնքան հանգիստ և ներդաշնակ, որքան նուրբ, սիրալիր և իր սերունդների մասին մշտապես հոգ տանող ճագարն է:

2023 թվականը նաև մեծ փոփոխությունների մեկնարկի տարի է, քաղաքական, տնտեսական և հոգևոր ոլորտներում վերափոխումների սկիզբ, նոր աշխարհի ձևավորման փուլ: Հատկապես այս տարի աստղերը հուշում են, որ դիվանագետները վերջապես կտվորեն բանակցել, և, ի վերջո, պատերազմներ չեն լինի:

Ինչպես դիմավորել Նապաստակին

Աստղագուշակները խորհուրդ են տալիս տոնական հագուստում օգտագործել մանուշակագույն դետալներ: Ամանորի գիշերը կրեք այն, ինչին սովոր եք, ինչը սիրում եք, և ինչը հարմար է:

Տոնական սեղանին հարկավոր է խուսափել նապաստակի մտով ուտեստներից: Նախապատվությունը տալով բանջարեղենին, հատկապես կաղամբին ու գազարին, նաև Ամանորի ճաշացանկը հարստացնելով ձկնեղենով՝ հաճելին կմատուցեք տարվա երկու տերերին էլ:

Հանգիստ, պարկեշտ և կանխատեսելի Նապաստակը գնահատում է տունն ու տան ջերմությունը: Այցելեք հարազատներին, շրջապատեք նրանց սիրով ու հոգատարությամբ:



Խոյ



Խոյերի համար աստղերը լավ նորություններ ունեն՝ 2023-ը ձեռքբերումների և դրական փոփոխությունների շրջան է: Լավ ժամանակ է կրթություն ստանալու, հմտությունները զարգացնելու, բնակելի տարածքը մեծացնելու, մի խոսքով՝ երազանքներն իրականացնելու: Ի դեպ, կարելի է նաև պատրաստվել ընտանիքի համալրմանը:

Աստղերը բարեկամաբար հուշում են, որ ժամանակն է սպորտով զբաղվելու և շրջագայելու:

Ցուլ



Տարին հաջողություն է խոստանում աշխատանքում, եթե միայն կարողանաք որսալ ճիշտ պահը: 2023-ին հարկ կլինի տիրապետել նոր գիտելիքների և հմտությունների, ինչի լավագույն ժամանակն ամառն է: Հնարավոր են նոր ծանոթություններ, որոնք կարող են վերաճել երկարատև ընկերության: Աստղերը հուշում են գումար չխնայել վերանորոգման և կենցաղային սարքավորումներն արդիականացման համար:

Երկվորյակ



2023-ը խորհուրդ է տալիս անել ամեն ինչ՝ երբեմնի ցանկություններն իրականություն դարձնելու համար: Կազմեք ծրագրեր, ձևավորեք նոր, առողջ սովորություններ՝ կենսակերպի ու մտվելու հետ կապված:

Զգուշացեք անազնիվ արարքներ թույլ տալուց: Հիշեք բումերանգի օրենքի մասին:

Խեցգետին



2023 թվականը խոստանում է հաճելի իրադարձություններ և անակնկալներ, որոնք կյանքը կդարձնեն ավելի հետաքրքիր ու ավելի լավը:

Մինչև հունիս տարին ավելի քան բարեհաջող է, սակայն զգոնությունը կորցնել պետք չէ: Կարելի է մտածել նոր մասնագիտություն ձեռք բերելու մասին:

Տարին հաջող կլինի ամուսնությունների համար, իսկ ամուսնալուծության դեպքում պետք չէ շտապել, ժամանակը կարող է ամեն բան շտկել: Սովորեք լինել ճկուն՝ ցանկացած կոնֆլիկտից խուսափելու համար:

Առյուծ



2023-ը խոստանում է հազեցած լինել: Առջևում ճակատագրական իրադարձություններ են, որոնք ճիշտ որոշումներ են պահանջում: Հնարավոր են և՛ ամուսնալուծություններ, և՛ նոր ծանոթություններ, և՛ նոր առաջարկներ:

Աշխատանքում ևս ամեն բան հարթ չէ, սակայն նոր որոշումներ կայացնելիս շտապել պետք չէ, իրավիճակից ելք գտնել միշտ է հնարավոր:

Աստղերը հուշում են ուշադիր լինել առողջության նկատմամբ:

Կույս



Եկող տարի աշխատանքում սեփական ուժերն ընդլայնելու հնարավորություններ կառաջանան, պետք է միայն հիշել, որ խոստումները պետք է ժամանակին կատարել:

Լավ է չափավորել ախորժակը, սովորել սահմանափակել ինքնեդ ձեզ, և արդյունքը չի ուշանա:

Ցավոք, անձնական կյանքում ամեն ինչ չէ, որ հարթ է: Տարեվերջին նախկին հարաբերությունները խզելու վտանգ կարող է առաջ գալ:

ՀՈՐՈՍԿՈՊ

Կշեռք



Կշեռքներին աստղերը խոստանում են դժվար, բայց հաճելի ժամանակներ: Տարվա առաջին կեսին բախտը ձեզ հետ է՝ անմոռանալի ճամփորդություններ, խոշոր ձեռքբերումներ, արդյունավետ համագործակցություններ: 2023-ն իդեալական տարի է ֆինանսական ներդրումների առումով: Բոլոր այն քայլերը, որոնք կկատարվեն հաջորդ տարի, ինչ-որ կերպ կազդեն հետագա ամբողջ կյանքի վրա:

Կարիճ



2023-ը բարենպաստ է նոր ձեռնարկումների համար: Պետք է միայն լրջորեն ու մտածված աշխատել:

Եկող տարի գումար մի՛ խնայեք անշարժ գույքի, վերանորոգման, հանգստի, առողջության և սիրելիներին նվերներ գնելու համար:

Ամառը փոփոխություններ է խոստանում ինչպես ֆինանսական, այնպես էլ անձնական կյանքում:

Աղեղնավոր



Գալիք տարում հաջողությամբ կլուծվեն բազմաթիվ հրատապ հարցեր: Միշտ կարող եք դիմել մտերիմներին՝ օգնության և խորհուրդների համար:

2023-ը երկար ճանապարհորդությունների և գործուղումների տարի է: Գարնանը հնարավոր են աշխատանքային փոփոխություններ: Նաև հին երազանքն իրականացնելու ժամանակն է: Վերցրեք նախաձեռնությունը ձեր ձեռքն ու ոչ մի բանի առաջ կանգ մի՛ առեք:

Այծեղջյուր



Այծեղջյուրների համար տարին բացահայտումների ու նոր հնարավորությունների շրջան է: Պետք է շատ աշխատել նպատակներին հասնելու համար: Մինչև ամառ եկամուտի նոր, մշտական աղբյուր ստանալու հնարավորություն կա, սակայն չարժի ռիսկի գնալ և անմիջապես հրաժարվել հին աշխատանքից:

Նույնիսկ եթե առողջական ոչ մի խնդիր չունեք, ժամանակ գտեք առողջությանը հետևելու և հանգստի համար:

Նոր հարաբերություններ ու կապեր կարող են հաստատվել, նաև հին ընկերները կհայտնվեն հորիզոնում:

Ջրիռ



Անցյալն անսպասելի կթակի ձեր դուռը, սակայն պետք չէ շատ ոգևորվել: Հնարավոր է, որ պատրանքները վերածվեն հիասթափությունների: Ավելի լավ է ժամանակ հատկացնել մասնագիտական նոր հմտություններ յուրացնելուն:

2023-ին սպասվում են արտասովոր ճանապարհորդություններ:

Շատ լավ գաղափարներ են գարնանն ու ամռանը բնակելի տարածքն ընդլայնելն ու վերանորոգելը: Ուշադրություն են պահանջում նաև ընտանեկան ու կենցաղային հարցերը:

Ձկներ



2023-ը թույլ կտա լուրջ հաջողություններ գրանցել կարիերայում, բարձրացնել նյութական բարեկեցությունը: Հիմնական խնդիրը, որի վրա պետք է կենտրոնանալ, բոլոր ընթացիկ գործերը ժամանակին ավարտելն է՝ առանց դրանք անորոշ ժամանակով հետաձգելու:

ՍՈՃԻ

Սոճին օգտակար նյութերի պահեսար է: Հաճախ կարելի է լսել, որ այն կլանում է մեծ քանակով էներգիա և պարարտանյութերի ու եփուկների միջոցով վերադարձնում մեր օրգանիզմին:

Բժշկական նպատակներով օգտագործվում են սոճու ոչ միայն կոները, այլև փշերն ու կեղևը:

Կոներ

Սոճու կոներն օժտված են հիանալի բուժիչ հատկություններով: Դրանք պարունակում են եթերայուղեր, C, B, K և P վիտամիններ, կարոտին, երկաթ, մագնեզիում, դաբաղանյութեր, ֆլավոնոիդներ, սելեն և այլն:

Բուժիչ նպատակներով օգտագործվում են կանաչ կոները՝ պատրաստուկներ, թուրմեր և եփուկներ՝ ստանալու համար, որոնք արդյունավետ են հետևյալ հիվանդությունների դեպքում՝ հազ, աղիքային վարակներ, ռևմատիզմ, ցածր հեմոգլոբին: Սոճու կոները.

- ամրացնում են իմունային համակարգը, բարելավում արյան շրջանառությունը,
- վերականգնում են արյունատար անոթների առաձգականությունը, ամրացնում պատերը, նոսրացնում արյունը,
- ազատում են գլխացավերից,
- միզամուղ են,
- ունեն հակասեպտիկ ազդեցություն:

Բրոնխ-թոքային համակարգի հիվանդությունների բուժման համար հիմնականում օգտագործվում է երիտասարդ սոճու կոների թուրմը, որը խորխաբեր է և ունի հակաբակտերիալ, ախտահանիչ հատկություն: Այս դեպքում անփոխարինելի է նաև կոնի թուրմով ինհալացիան, քանի որ ախտահանում է քթի խոռոչը, նոսրացնում խորխը:

Հիպերտոնիայի դեպքում նույն թուրմն անոթները մաքրում է խարամային զանգվածներից:



Փշեր



Սոճու փշերը պարունակում են C վիտամին (7 անգամ ավելի, քան կիտրոնում), K, P, B վիտամինների խումբ, հակաօքսիդանտներ, հանքանյութեր, օսլա, օրգանական թթուներ և այլն: Դրանք.

- նվազեցնում են սթրեսը, քանի որ նպաստում են առողջ քնին,
- բարելավում են մաշկի և մազերի վիճակը,
- արագացնում են վերքերի բուժման ընթացքը,
- ամրացնում են հոդերը, ուստի շատ հաճախ խորհուրդ է տրվում օգտագործել ռախիտի և հենաշարժական համակարգի տարիքային հիվանդությունների դեպքում,

• շնորհիվ վիտամինի բարձր պարունակության՝ կանխարգելում են կարմրախտը:

Սոճու փշերի թուրմը կանխում է սալերի առաջացումը՝ մաքրելով արյունատար անոթները: Բարելավում է հարթ մկանների աշխատանքը: Այն կարելի է ընդունել հոգնածությունը և գլխացավը մեղմելու նպատակով: Նաև կարգավորում

է արյան ճնշումը, իջեցնում խոլեստերինի և արյան մեջ շաքարի բարձր մակարդակը, օգնում հաղթահարել ավելորդ քաշը, կարգավորում նյութափոխանակությունը, պաշտպանում ուժամատիզմից, մաշկային հիվանդություններից, վաղաժամ ծերացումից և այլն: Սոճու փշերն անուշաբույր են և հրաշալի մաքրում են օդը:



Կեղև

Սոճու կեղևը բազմաթիվ բարդ ֆլավոնոիդների աղբյուր է: Դրանում եղած պրոանտոցիանիդիններն ամրացնում են արյունատար անոթներն ու սիրտը, կանխում բջիջների վնասումը:

Սոճին խոհանոցում

Կոնից ջեմն ու մեղրն ամրապնդում են իմունային համակարգը, վերականգնում ուժերը, օգտակար են շնչառական և աղեստամոքսային տրակտի տարբեր հիվանդությունների դեպքում: Հատկապես մեղրն ունի մանրէասպան հատկություն:



Հակացուցումներ

Նշված դեղամիջոցները ցուցված չեն.

- երիկամային հիվանդության դեպքում,
- հղիության և կրծքով կերակրման շրջանում,
- ալերգիայի նկատմամբ նախատրամադրվածություն ունենալիս,
- հեպատիտի սուր ընթացքի ժամանակ,
- եթե ունեք անհանդուրժողականություն փշերում առկա ցանկացած քիմիական բաղադրիչի նկատմամբ:

Հիշենք, որ ինքնաբուժությունը կարող է հանգեցնել բացասական արդյունքների: Անգամ բնական դեղամիջոցներ ընդունելը պետք է համաձայնեցնել բժշկի հետ:

Ուշադրություն

1. Չի կարելի օգտագործել հիվանդ կամ միջատների վնասած ծառի կոները:

2. Կոները չպետք է գետնից հավաքել: Սովորաբար դրանք հին պտուղներ են, հետևաբար լավագույն դեպքում կարող են չվնասել:

ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Փաստ է, որ մեր ենթագիտակցության մեջ դիմացինի կերպարը արեղծվում է շփման առաջին վայրկյանների ընթացքում: Առաջին տպավորությունը թեև ոչ միշտ է ճիշտ, բայց միշտ է հիշվում, ինչը նշան է հաղորդակցության առաջին վայրկյանների կարևորության:

Առաջին տպավորությունը ձևավորվում է խոսքի, ձայնի և արտաքին տեսքի միջոցով:

Խոսքով ձևավորված տպավորությունը ներառում է ողջունի խոսքը, ներկայանալը, եթե արդեն գիտեք զրուցակցի անունը, նաև նրան դիմելը,

ձեռքսեղմումը, այցեքարտերի փոխանակումը և այլն:

Ձայնով ձևավորված տպավորությունը ներառում է բառերն արտաբերելու տեմբրը, բարձրությունը, արագությունը, մեղմությունը կամ լարվածությունը, ինչն էլ պայմանավորում է ասելիքի իմաստային բազմազանությունը:

Ցանկացած դեպքում զրուցակիցը պետք է վս-

տահ լինի, որ դուք ուրախ եք հանդիպման համար, ուշադիր լսում եք իրեն և պատրաստ եք գործակցության: Ի դեպ, սա կարևոր է հատկապես հեռախոսային խոսակցության դեպքում, երբ տպավորություն թողնելու միակ բաղադրիչը ձայնն է:

Արտաքին տեսքով ձևավորված տպավորությունը ներառում է դեմքի ու աչքերի արտահայտությունը, մարմնի շարժումները, կեցվածքը, ժեստերը և հագուստը: Երբեմն սրանց թողած տպավորությունն ավելին է, քան ձայնին ու խոսքին:

Ի դեպ, մասնագետները պնդում են, որ կարելի է երկար նախապատրաստվել հաճելի և խոսուն տպավորություն թողնելու համար՝ միաժամանակ հիշեցնելով, որ առաջին տպավորությունը կարող է անհույս փչանալ, եթե.

- սիրում եք ուշանալ,
- չեք հետևում հիգիենայի կանոններին (հիշեք, որ ձեռքերը միշտ տեսադաշտում են, հետևաբար դրանք ու հատկապես եղունգները պետք է անթերի մաքուր ու խնամված լինեն, իսկ կանանց դեպ-

քում՝ մեղմ երանգներով լաք քսած (ճշացող գույները ոչ մի դեպքում չեն խրախուսվում)),

- եթե հագնված եք պահին և իրավիճակին ոչ համապատասխան, և զարդերն ավելին են, քան պետք է,

- խոսում եք ժարգոնով՝ խոսքը համեմելով անիմաստ սրամտություններով, անհարկի հպումներով և այլն:

Հավելենք, որ արգելված չէ նաև զուսպ կամ, այսպես կոչված, գործնական հաճոյախոսությունը ընկերության գործունեության կամ բարի համբավի մասին:

Այն, ինչ ոչ մի դեպքում չի կարելի անել առաջին հանդիպման ժամանակ, կրոնից ու քաղաքականությունից խոսելն է:



ԳԻՏԱԾԿԱԽԳՇԱԽԱԶ

Չմեռ 2022



Դիզայներները պնդում են, որ այն, ինչ առաջարկվում է այս ձմեռ, կարծես թե այնքան էլ նորություն չէ: Դե, իհարկե, չէ՞ որ ցանկացած նոր բան, լավ մոռացված հինն է:

2022-ի ձմեռային զգեստապահարանը մի վառ գունապնակ է հիշեցնում, որում գերիշխողը դեղինն ու կարմիրն են:

Դեռևս նախորդ տարի պոպյում վերադարձած ժիլետներն ակտուալ են նաև այսօր: Դրանք կտորից ու մորթուց են, կաշվից կամ հյուսկեն: Ի դեպ, դիզայներներն առաջարկում են ժիլետ հագնել ոչ միայն վերնաշապիկների կամ տոպերի վրայից, այլև մերկ մարմնին:

2000-ականներից հայտնի բարձր գոտկատեղով լայն ջինսերն այսօր էլ ամենանորաձևն են: Դրանք ձմռանը համադրելի են գրեթե ամեն ոճի ու գործվածքից բաճկոնների հետ:

Շարունակում են առաջատար դիրք զբաղեցնել դասական տաբատները, կիսաշրջագգեստներն ու շորտերը՝ համակցված վերարկուների հետ, որոնք տարբեր հաստության գործվածքներից ու արհեստական մորթուց են:

Շարունակում են առաջատար դիրք զբաղեցնել դասական տաբատները, կիսաշրջագգեստներն ու շորտերը՝ համակցված վերարկուների հետ, որոնք տարբեր հաստության գործվածքներից ու արհեստական մորթուց են:



Ձեռնոցներ

Այս արքեսուարը ձմռանը վերարկուների և բաճկոնների հետ ոչ միայն ջերմություն կփոխանցի, այլև ամբողջական կդարձնի կերպարը՝ լրացնելով բաց վերնաշապիկներին, անթև զգեստներին, նաև կորսետներին ու թիկնոցներին: Սրանք կարող են նաև երեկոյան հանդերձանքի մաս դառնալ:

Պայուսակներ

Կանացի պայուսակների ընտրությունն այս ձմեռ ենթադրում է երևակայության անսահման թռիչք՝ շատ մեծ ու շատ փոքր, կաշվից, մորթուց, անգամ տրիկոտաժիգ մոդելներ, ուսապարկեր ու ճամպուրակներ:



Կոշիկներ

Կանանց արտաքին տեսքն ամբողջական է դառնում հենց ճիշտ ընտրված կոշիկների շնորհիվ:

Դիզայներները պնդում են, որ խնայել կոշիկների վրա չի կարելի, քանի որ դրանք միաժամանակ պետք է լինեն գեղեցիկ, ոճային, նորաձև, նաև դիմակայեն բոլոր եղանակային պայմաններին:

Եվ այսպես, պողիումները զարդարում են մինչև ծունկը հասնող, սուր քթով, փայլեցված կաշվից, բարձրակրունկ ու առանց կրունկի մոդելները:

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՆՈՐԱԶԵՎՈՒԹՅՈՒՆ

Տղամարդիկ կանանցից ոչ պակաս հետաքրքրված են նորաձև հագուստի բոլոր նորություններով ու հոգ են տանում իրենց արտաքինի մասին:

Այս ձմեռ առավել ակտուալ են ժիլետները, լայն բաճկոնները՝ զարդարված շթաններով, հիմնականում բեժ, կաթնային, խակի, կապույտ, մոխրագույն և սև, նաև մեծ, գունագեղ շարժերը: Մակայն սա չի նշանակում, որ կուրորեն պետք է հետևել նորաձևության միտումներին: Կարևորը հարմարավետությունն է:



Կոշիկներ



Նորաձև կոշիկները՝ սպորտային թե դասական, կհամալրեն տղամարդկանց լավագույն հավաքածուները՝ միաժամանակ հիմնալի տեսք հաղորդելով ցանկացած տղամարդու: Առաջարկվող հսկայական բազմազանության մեջ, թրենդային կոշիկներ ընտրելիս, պետք է ուշադրություն դարձնել նյութին, գույնին, դիզայնին, ընդհանրապես այն ամենին, ինչը կարևոր է հատկապես ցուրտ եղանակին:

Պայուսակներ

Ուժեղ սեռի ամենախստապահանջ ներկայացուցիչներին առաջարկվում են տարատեսակ պայուսակներ՝ ուսապարկ, պորտֆել, գոտի-պայուսակ, սակվոյաժ, բարսետկա և այլն, որոնցով կարելի է ընդգծել անհատական ոճն ու նուրբ ճաշակը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱՆԴ ՔԵՆԴԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	2
ՊՈՈՇՅԱՆԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ	5
ՍԱՆՖՈՒԴ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	6
ԱԹԵՆՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	9
ՎԻ-ԷԼ-ՎԻ ՍԵՆԹՐ ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՑԱՆՑ	10
Oval Pack ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	13
ՎԱԼԱՆ ԴԵԿՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	14
ՑԱՐԻՑԻՆՈ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	17
ՎԻՎԱ ԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ ԽԱՆՈՒԹ-ՍՐԱՀ	18
ՌԻՍԱ ԹՐԱԿԵԼ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ	21
2022 Թ. ԶՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	22
ՆԱԽԱՏՈՆԱԿԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳ	33
ԱՌՋԵՎՈՒՄ ՍԵՎ ՋՐԱՅԻՆ ՆԱՊԱՍՏԱԿԻ ՏԱՐԻՆ Է	36
ՍՈՃԻ.....	39
ԱՌԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ.....	41
ՋՄԵՌ 2022.....	42

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ
 Թեժ գիծ՝ +374 98 24 92 04; +374 99 24 92 04
 E-mail: info@armconsumer.am;
 nationalconsumerassociation@yahoo.com
 URL: http://www.armconsumer.am

Տպաքանակը՝ 2000: Ծավալը՝ 3 մամուլ
 Տպագրվել է ՏՊԱՐԱՆ ԷՅ ԷՍ
 տպագրատանը
 Բաժանվում է անվճար
 Գրանցման վկայականը՝ 2215
 Հղումը ՄՊԱՌՈՂ-ին պարտադիր է

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԴԱՆԻՔ ԱՄԱՆՈՐ

2023

Պարի օրացույցներ Լոռաբերդեր Օրագրեր Ժողովուրդականներ
Բացիկներ Բաժաններ Անդամի օրացույցներ Դրարներ Գրիչներ



☎ 060 44 66 85
091 40 70 38
📍 Գյուլիստան 15

ՏՊԱՐԱՆ.am



✉ info@tparan.am
🌐 www.tparan.am

